ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքում 27.01.2019թ. կայացած հանրային լսումների

Գ. Գեղհովիտ

Հանրային լսումների մասնակցում էին <<Մեր քարեր>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Պողոսյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Ս.Սուքիասյանը, համայնքի բնակիչներ՝

Յարութ Ռոկունյանը, Հովհ. Դոլիկյանը, Գևորգ Զաքարյանը, Սիներ Հովհաննիսյանը, Վոսկրատ Սահակյանը և Գառնիկ Հովհաննիսյանը

<<Մեր քարեր>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Պողոսյանը ներկայացրեց, որ համայնքի վարչական սահմաններում ընկերությունը ցանկանում է շահագործել բազալտի արդյունահանում: Նշեց, որ այն կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, և աշխատանքների մեջ կընդգրկվեն հիմնականում համայնքի և հարակից գյուղերի բնակիչները: Ընկերությունը կապահովի բնապահպանական բոլոր նորմերը, ակտիվորեն կմասնակցի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման աշխատանքներին:

Ելույթներ ունեցան համայնքի բնակիչներ Սիներ Հովհաննիսյանը, Վոսկրատ Սահակյանը, Հովհ. Դոլիկյանը, Յարութ Ռոկունյանը

Ամփոփելով նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումների արդյունքները համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Ս.Սուքիասյանը նշեց նախատեսվող աշխատանքների կարևորությունը համայնքի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման համար: Փաստվեց նաև, որ աշխատանքների ընթացքում պետք է պահպանվեն համայնքի բնակիչների շահերը:

Համայնքը տալիս է իր համաձայնությունը ընկերությանը սահմանված կարգով քարհանքի շահագործումը:

Քննարկումների պատասխանատու և վարող՝ _____ Ս.Սուքիասյան

Արձանագրող՝ _____ Ա.Կարապետյան

<<Մեր քարեր>> ՍՊԸ-ի տնօրեն՝ _____ Ա.Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ _____ Հ. Պողոսյան.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԳԵՂՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N 165

« 29 »_____05_____2019թ.

հեռ.0262-44719

էլ. հասցե geghahovit.gegharquniq@mta.gov.am

<<Մեր Քարեր>> ՍՊԸ –ի տնօրեն
պարոն Ա.Պողոսյանին

Ի պատասխան Ձեր գրության, հայտնում ենք, որ 2019թ. –ի մայիսի 27-ին ժամը 12:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի համայնքապետարանի շենքում տեղի է ունեցել հանրային քննարկումներ <<Մեր Քարեր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Մարտունու /Գեղհովիտի/ բազալտի հանքավայրի արդյունահանման նախաձեռնության վերաբերյալ:

Հանրային քննարկմանը մասնակցած համայնքի բնակիչները որոշեցին տալ նախնական համաձայնություն <<Մեր Քարեր>> ՍՊԸ-ին կազմել շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ:

Կից ներկայացնում ենք հանրային քննարկումների մասնակիցների ցանկը, արձանագրությունը և տեսաձայնագրությունը:

Համայնքի ղեկավար՝ Վ.Պողոսյան